պ. Մանանդեան պէտք չէ համարում ուշադրութեամբ կարդալու այն՝ ինչ որ չտպագրում է հերքելու։ Կոչ արած տեղը խօսքս այն մասին է թէ տոհմային կենցաղը երբ փոխանցուում է ֆէոդալականի, ի՞նչ փոփոխութիւն են կրում տոհմային տերմինները։ Այն բառերը, որ սկզբում նշանակում էին ընդհանրապէս տոհմի զաւակներ, պահում են սովորական իմաստը, իսկ մի քանիսը, օրինակ սեպուհ դառնում է յատուկ իշխանական տներին։

Այստեղ հակադրւում են ոչ իշխանական եւ թագաւորական այլ իշխանական եւ հասարակ ընտանիքները։

Ասել է թէ գիւղացու որդին չի կոչւում սեպուհ, այլ իշխանի, եւ ոչ թէ իշխանի որդին սեպուհ է, ինչպէս պ. Մանանդեան է թիւրաբանել, իսկ թագաւորինը չէ սեպուհ։

Այս տեսակ առարկութիւնները արդէն բացարձակ ժամանակաւորութիւն է։

Իր հերքումներով պ. Մանանդեան ուղիները հարթուած է համարում, որպէսզի վերջապէս աւետէ մեզ իր նոր խօսքը, վիճելի խնդրի վերաբերեալ։

Ոստանիկները, պ. Մանանդեանի կարծիքով, թագաւորական ծագում չունին։ Խորենացին սխալուել է նրանց թագաւորազն համարելով։ Ոստանը արքունիքի հետ չունի։ Ոստան է կոչւում արքունի հողը, ուրեմն Եղիշէի՝ 'ոստանիկ յարքունի տունէ' հասկանալու է աշխարհագրական մտքով եւ ոչ տոհմային։

Ասել է թէ ոստանիկները այն մահկանացուներն էին որ ապրում էին թագաւորի հողերի վրայ։ Սրանք գործ չունին ո՛չ թագաւորի, ոչ սեպուհների եւ ոչ նախարարների հետ։ Ապա ի՞նչ են։ Զէ՞ որ ֆէոդալական դար էր եւ գին ունէր միայն արիւնը, ազնուականութիւնը, իսկ ազատ դասի մէջ մուտք չէին կարող ունենալ բոլոր այն մարդիկ, որ ոչ թագաւորական են, ոչ նախարար, ոչ սեպուհ։

Փակելով հնարաւորութեան դռները պ. Մանանդեան ուրիշ ելք չէ գտնում քան մի սոսկալի թռիչք անել դէպի հեռաւոր անցեալի մութիւնները։ Նա, որ այնքան սիրում է մատենագրական տեղեկութիւնները, որ ուրիշներից պահանջում է անգամ ստուգաբանական խնդիրներում մատենագրական ակնարկներ, յանկարծ դիր եւ դիրք մի կողմ է նետում եւ սլանում անգիր դարերի վրայից մինչեւ Հայկեան ժամանակները։ Եւ ահա ինչ է բարբառում.

«Ոստանը կամ արքունի երկիրը Հայաստանի տանուտիրական բուն այն շրջանն էր, ուր դլխաւորապէս հաստատուած պիտի լինէր հնդկա-եւրոպական եկեւր եւ տիրող ցեղը եւ հիմնած քաղաքական ամենանշանաւոր իր կենդրոնները։ Եթէ այդպէս է, չէ՞նք կարող արդեօք ենթադրել որ ոստանիկ դասը մեծ մասամբ բաղկացած պիտի լինէր հին այս տիրող ցեղի հատուածներից։ Զէ՞ որ Հայկ նահապետը, որի սերունդներից, Խորենացու կարծիքով ,ծագել է ոստան ազատութիւնը, ոչ թէ իրօք թագաւոր է եղել, այլ գառասպելական մի հսկայ, որը դառել է հայազգի անուանադիր հերոսը եւ նախահայրը»։

Այս բանաստեղծութիւնից յետոյ պ. Մանանդեան միանգամայն վստահելի է համարում Խորենացու վկայութիւնը, որ պարսիկները ոչընչացրին հին ռազմիկ դասը եւ նրա տեղ ստեղծեցին հլու արքունի գունդ։

Տեսանք, որ Խորենացու խօսքերը այլ բան չեն եթէ ոչ բանասէրի փորձ մեկնելու Փարպեցու եւ Եղիշէի տեղեկութիւնները։

Ընթերցողը սակայն սպասում է գիտենալ, ի՞նչ էր այդ ոստանիկ կոչուած ռազմիկ դասը, ինչո՞ւ էր նա ազատ եւ ի՛նչով էր ազատ։ Այդքան դիմացկուն քաջարի դասը ի՞նչպէս է որ նախարարական աթոռներ չէ գրաւել։

Մեր քննադատի ցանկութիւնն է, որ նրանք ազատ լինին, բայց չինական։ «Ընդունելով որ ոստանիկ են անուանուել Արշակունեաց բուն երկրի ազատները, խորհում է պ. Մանանդեան, որոնցից կազմուած գունդն անուանուել է արքունի կամ յարքունի տունէ. դժբախտաբար, աղբիւրների վկայութիւնից չի որոշւում թէ արդեօք այդ ոստանիկ ազատների դասին չէ՞ն պատկանել նաեւ ազատ գիւղացիներ, որոնք կարող էին գոյութիւն ունեցած լինել հին Հայաստանում»։ Այս դէպքում «հաւասար եւ ըստ մարդաքուի հողաբաժանումը կարող էր վերաբերուել ոստանիկներին», վերջացնում է պ. Մանանդեան, եթէ միայն գտնուէր մատենագրական աղբիւրների մէջ հաստա-